

**«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի դեպարտամենտի եզրակացությունը
2012թ-ի ընթացքում «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական
բանկի կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պահանջներին համապատասխանության
վերաբերյալ**

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից 2012թ-ի ընթացքում և 31.12.2012թ-ի դրությամբ իրականացվել են Բանկի ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության գնահատմանն ուղղված ստուգումներ:

Ստուգումներն իրականացվել են մեր կողմից, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը կարող է հիմք հանդիսանալ Բանկի ներքին հսկողության համակարգի ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանության վերաբերյալ եզրակացության համար:

Բանկի ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են, բայց չեն սահմանափակվել.

- Բանկի նորմատիվային բազայի բավարարության և գործող օրենսդրության պահանջներին վերջինիս համապատասխանության գնահատումը,
- Բանկի ղեկավարների և աշխատակիցների իրավասությունների փոխանցման և կառուցվածքային ստորաբաժանումների միջև իրավասությունների բաշխման համակարգերի վերլուծությունը,
- գործարքների իրականացման և հաշվետվությունների ձևավորման ընթացքում Բանկում/մասնաճյուղերում հսկողության և ռիսկերի գնահատման համակարգերի առկայության և համարժեքության, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի ապահովության գնահատումը,
- Բանկի ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգի ուսումնասիրությունը,
- Բանկի ստորաբաժանումների կողմից, Ներքին աուդիտի դեպարտամենտի ստուգումների արդյունքներով արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների ստուգումը և դրանց բավարարության վերլուծությունը,
- ՀՀ կենտրոնական բանկի և այլ իրավասու մարմինների կողմից Բանկում իրականացված ստուգումների արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև, արձանագրված թերությունների վերացմանն ուղղված Բանկի ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների ստուգումը և դրանց բավարարության վերլուծությունը:

2012թ-ի ընթացքում Բանկի ներքին հսկողության համակարգում (մասնավորապես. կառավարման համակարգում, ստորաբաժանումների ֆունկցիոնալ կանոնակարգերում, վարկավորման գործընթացում, հաշվառման համակարգում) Արտաքին աուդիտի, ՀՀ կենտրոնական բանկի և Ներքին աուդիտի դեպարտամենտի կողմից հայտնաբերված ներքին հսկողության նվազագույն պահանջներին անհամապատասխանությունները անհրաժեշտ միջոցառումների արդյունքում վերացվել են կամ գտնվում են կարգավորման փուլում:

Մեր կարծիքով, 31.12.2012թ-ի դրությամբ Բանկի ներքին հսկողության համակարգը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պահանջներին:

**«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ներքին աուդիտի դեպարտամենտի տնօրեն**

Ա.Բեգլարյան

**ք. Երևան
29 մարտի 2013թ.**

**Հավանություն է տրվել
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդին կից
Աուդիտի կոմիտեի _____թ-ի նիստի թիվ _____ արձանագրությամբ**